



ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումները
Ամսական տեսություն (Դեկտեմբեր 2017թ)
և տարեկան ամփոփում



Հարգելի այցելու,

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված Ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների ամսական տեսությունը հրապարակվում է ամսական հաճախականությամբ և իրենից ներկայացնում է ՀՀ ֆինանսական շուկաներում իրականացված գործարքների ամփոփ վերլուծություն: Այն իր մեջ

պարունակում համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում տեղի ունեցած գործընթացների ու միտումների ամփոփ տեղեկատվություն. ՀՀ մակրոտնտեսական հիմնական ամսական ցուցանիշների դիտարկում. ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության ընթացքում իրականացված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև պետական, կորպորատիվ արժեթղթերի շուկաների և միջբանկային շուկաներում կնքված գործարքների վերաբերյալ ամփոփ վերլուծություն:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումների վերլուծության նպատակը այս շուկաներում տեղի ունեցող գործընթացները տեսանելի դաշտում պահելն ու դրանց ազդեցությունը ՀՀ եվրոպարտատոմների, ՀՀ ներքին ֆինանսական շուկայի և ընդհանրապես՝ երկրի մակրոտնտեսական վիճակի վրա հասկանալն է, ինչը, նկատի ունենալով ազդեցությունների լազային(ժամանակային առումով խզված) բնույթը, կարևոր է մեր տնտեսության համար ապագա զարգացումների կանխատեսման տեսանկյունից: Մյուս կողմից՝ համաշխարհային կապիտալի շուկաներում ներդրողներ են նաև ՀՀ սուբյեկտները(ԿԲ, կենսաթոշակային ֆոնդեր, այլ ինստիտուտներ և անհատներ), ինչը ևս կարևոր է դարձնում այստեղ ընթացող զարգացումների վերլուծությունը: Այս՝ ամսական պարբերականությամբ հրապարակվող տեսությունը ամփոփում է ՀՀ եվրոպարտատոմների, համաշխարհային ապրանքային(մետաղներ, էներգակիրներ, պարենային ապրանքներ), արժույթային(դոլարի ինդեքս, եվրո, ՌԴ ռուբլի) և կապիտալի(զարգացող և զարգացած երկրների ֆոնդային ինդեքսներ և պետական պարտատոմների եկամտաբերություններ) շուկաներում տեղի ունեցող զարգացումների վերլուծությունը: Ամսական տեսությունը հիմնվում է Investing.com հարթակի հրապարակած վիճակագրության վրա, իսկ վերլուծությունների հիմքում Reuters գործակալության տեղեկատվական ու վերլուծական հրապարակումներն են և սեփական դիտարկումները: ՀՀ սոցյալ տնտեսական վիճակի հետ կապված հիմնական ցուցանիշների ներկայացումը նպատակ ունի ներկայացնել ՀՀ տնտեսական ակտիվության, տնտեսության հիմնական ճյուղերի զարգացումների, սպառողական և արդյունաբերական գների ինդեքսների, արտաքին ապրանքաշրջանառության և բնակչության միջին ամսական աշխատավարձերի ընդհանուր միտումները, ինչը թույլ է տալիս գնահատել Ֆինանսական շուկաների վրա մակրոտնտեսական և սոցյալ-տնտեսական ընդհանուր վիճակի ազդեցությունները: ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության շրջանակներում ներկայացված են ԿԲ կողմից կիրառվող անուղղակի գործիքների կիրառումը, դրանց շրջանակներում իրականացված գործարքները, ինչպես նաև դրամական զանգվածի կառուցվածքը և դրանում իրականացվող փոփոխությունները: ՀՀ արտարժույթի շուկայի հետ կապված ներկայացված են ԱՄՆ դոլարի, եվրոյի, ՌԴ ռուբլու բորսայական, արտաբորսայական, ներբանկային և միջբանկային գործարքները, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի շուկայում իրականացված գործառնությունները: Արժեթղթերի շուկայի վերլուծությունը բաղկացած է պետական և կորպորատիվ

արժեթղթերի շուկաների հետ կապված դիտարկումներից: Պետական պարտատոմսերի շուկայի հետ կապված ներկայացվում են առաջնային շուկայում դրանց տեղաբաշխումները, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետգնումները, բորսայական և արտաբորսայական շուկաներում կնքվող գործարքները, գործակալ բանկերի կողմից բորսայական գնանշումները, ինչպես նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի փոփոխությունները: Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետ կապված ներկայացվում են բորսայական և արտաբորսայական տեղաբաշխումները, բորսայական շուկայում կնքված գործարքները, դրանց շուկա ստեղծողների գնանշումները: Միջբանակային շուկայի վերլուծությունն իրենից ներկայացնում են միջբանակային վարկային, սվոփ և ռեպո շուկաների ամփոփ դիտարկումներ:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական Բանկի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ հրապարակումները և վիճակագրական աղբյուրների բազաները: Ձեզ ներկայացվող վիճակագրական աղյուսակների, գծապատկերների և ներկայացվող տվյալների մի մասը նշված մարմինների կողմից օրական կտրվածքով հրապարակվող տվյալների համախմբման արդյունք են:

Սույն վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:



«Ամբերդ» հետազոտական կենտրոն

Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ info@amberd.am

Բովանդակություն

Ամփոփ տեսություն:	5
ՀՀ եվրոպարտադրումներ:	6
Համաշխարհային ապրանքային շուկաներ:	7
Համաշխարհային արժութային շուկաներ:	11
Համաշխարհային կապիտալի շուկաներ:	15

Ամփոփ տեսություն: 2017թ-ի դեկտեմբերին համաշխարհային ֆինանսական շուկաների համար կարևոր երկու իրադարձություններ են տեղի ունեցել՝ ԱՄՆ Կոնգրեսում ընդունվել է Թրամփի հարկային բարեփոխումների փաթեթը և ԴՊՀ-ն բարձրացրել է տոկոսադրույքը: Սակայն ակտիվների գնանշումների դինամիկան այդքան էլ չի բխում այս իրադարձություններից: Ամսվա ընթացքում դիտվել է մետաղների և էներգակիրների գների աճ, պարենային շուկայում՝ անհստակ միտումներ: Արժույթային շուկայում դոլարը թուլացրել է դիրքերը, ընդ որում՝ ռուբլին ուժեղ կոռելացված է եղել նավթին: Ամերիկյան և զարգացող երկրների ֆոնդային շուկաներում աճը շարունակվել է, իսկ գերմանական շուկայում գները փոքր ինչ նահանջել են: Նվազել են նաև պետական պարտատոմսերի եկամտաբերությունները:

Տարեկան ամփոփում


2017թ-ի ընթացքում համաշխարհային ֆինանսական շուկաներում ռիսկային ակտիվների նկատմամբ պահանջարկն աճել է՝ էականորեն ավելացնելով ֆոնդային ինդեքսների արժեքները: Միևնույն ժամանակ աճել է ոսկու գինը՝ արտացոլելով դոլարի դիրքերի թուլացումն ու գեոքաղաքական ռիսկերի աճը: Եվրոն զգալիորեն ամրապնդել է դիրքերը՝ պայմանավորված Եվրոպական կենտրոնական բանկի կողմից քաղաքականության աստիճանական նորմալացման սպասումներով: Ռուբլին ևս աճել է՝ նավթի գնի վերականգման և ռուսական շուկաներում բարձր տոկոսադրույքների շնորհիվ:

Աճել են նաև պղնձի գները՝ անցնելով 1 տոննայի համար 7 000 դոլարի սահմանը: Հայաստանյան եվրոբոնդերի գները ևս աճել են՝ կայուն տրենդով: Արդյունքում եկամտաբերությունները պատմական մինիմալ մակարդակներում են՝ 10 տարով թողարկվածը 5, իսկ 7 տարով թողարկվածը՝ 3.8%:

ՀՀ եվրոպարտատումներ: ՀՀ եվրոպարտատումների եկամտաբերությունները 2017թ-ի ընթացքում նվազման միտում են ձևավորել: 6% արժեկտրոնային եկամտաբերությամբ 2013թ-ին թողարկված, 2020թ-ին մարվող եվրոպարտատումների եկամտաբերությունը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 4.2, իսկ 7.15% արժեկտրոնային եկամտաբերությամբ 2015թ-ին թողարկված, 2025թ-ին մարվող եվրոպարտատումներինը՝ 2.8%-ով: Եկամտաբերությունները 2016թ-ի նոյեմբերի նկատմամբ նվազել են համապատասխանաբար 28.91 և 25.17 տոկոսով:

Նոյեմբերի 30-ի դրությամբ առաջինի եկամտաբերությունը կազմել է 3.8, իսկ երկրորդինը՝ 5%:

Գծապատկեր 1 ՀՀ եվրոպարտատումների եկամտաբերությունները, 2016թ նոյեմբեր -2017թ նոյեմբեր




Ձևավորված ընդհանուր նվազման միտումը կարելի է բացատրել համաշխարհային շուկայում ՀՀ եվրոպարտատումների դիրքերի աստիճանական ամրապնդմամբ, որին էականորեն նպաստում է նաև երկրում պահպանվող ֆինանսական և հարկաբյուջետային կայունությունը, և որպես արդյունք՝ միջազգային վարկանշավորողների կողմից տրված «կայուն» հեռանկարով վարկանիշները:

Ընդհանուր առմամբ՝ ՀՀ եվրոբոնդերի եկամտաբերությունների դինամիկան վկայում է շուկայի մասնակիցների կողմից ՀՀ «երկրի ռիսկի» գնահատականի բարելավման մասին:


Նշենք, որ երկրի թողարկած եվրոպարտատոմսերի եկամտաբերությունը լավագույնն է արտացոլում այս ռիսկի փոփոխությունը, իսկ սեփական արժույթով պարտատոմսերի եկամտաբերությունն իր մեջ ներառում է նաև փոխարժեքի ռիսկը:

Համաշխարհային ապրանքային շուկաներ: Մետաղների շուկայում դեկտեմբերին ակտիվների գների կոռելացված կտրուկ աճ է դիտվել: Ոսկու գները բարձրացել են 2.6, իսկ պղնձինը՝ 8 տոկոսով: 2017թ-ին ոսկու գներն աճել են 13.2, իսկ պղնձինը՝ 32.3%-ով:



Ոսկին 2017թ-ի դեկտեմբերի նախ նվազել, ապա՝ կտրուկ աճել է: Ամսվա ընթացքում գների դինամիկայի հիմնական դրայվերները 2-ն էին: Նախ՝ ամսվա սկզբին ԱՄՆ Սենատը, ապա Կոնգրեսը հաստատեցին Թրամփի վարչակազմի հարկային բարեփոխումների փաթեթը, որի վերաբերյալ սպասումները ամբողջ տարվա ընթացքում գների դինամիկայի կարևոր դրայվեր էին, իսկ որոշումը արդեն սպասված էր շուկայի կողմից ու ներառված էր գնանաշումներում: Մյուս կարևոր իրադարձությունը տարվա ընթացքում ԱՄՆ ԴՊՀ կողմից տոկոսադրույքների 3-րդ անգամյա բարձրացումն էր՝ դաշնային ֆոնդերի տոկոսադրույքները սահմանելով 1.5%: Սա ևս 100 տոկոսով սպասված էր շուկայի կողմից, ուստի ոսկու գների վրա ճնշում չառաջացրեց:

Տեխնիկական վերլուծության տեսանկյունից՝ ոսկին կրկին վեր է հրվել օժանդակության գծից՝ պահպանվելով տարեկան աճի տրենդը:




Տարվա ընթացքում ոսկու գների աճը օժանդակություն է գտել մյուս հիմնական արժույթների նկատմամբ դոլարի դիրքերի թուլացումից(տե՛ս Գծ. 3-ը), գեոքաղաքական ռիսկերի աճից(հատկապես՝ Հյուսիսային Կորեայի հեղկապված) և ԱՄՆ-ում դրամավարկային քաղաքականության կոշտացուման՝ սպասվածից ցածր տեմպով:

Պղնձի գները դեկտեմբերին կտրուկ թռչել են վեր՝ պայմանավորված դոլարի դիրքերի թուլացմամբ և ամենակարևորը՝ Չիլիում առաջարկի ընդհատումների ռիսկով:

Տարեսկզբից պղնձի գների կտրուկ աճը ևս պայմանավորված է առաջարկի խզումներով՝ հիմնականում Չինաստանում և Ինդոնեզիայում: Դեկտեմբերին պղնձի գնանշումները մոտեցել են դիմադրության գծին, և ամենայն հավանականությամբ կնահանջեն՝ Չինաստանի տնտեսությունից և անշարժ գույքի շուկայից եկող չնչին բացասական ազդակների առկայության դեպքում:

Էներգակիրների շուկայում դեկտեմբերին նավթի գները շարունակել են աճել՝ 5.2 տոկոսով, իսկ դիզելային վառելիքի(Heating oil) գնի աճը կազմել 9.7 տոկոս: Տարեսկզբից նավթի գներն աճել են 17.7, իսկ դիզվառելիքի գները՝ 21.8 տոկոսով:



Նավթի գները դեկտեմբերը սկսել են կտրուկ բարձրացած տատանողականությամբ՝ պայմանավորված Հյուսիսային ծովում անգլիական նավթատարի վնասմամբ և նավթի առաջարկի ընդհատումներով: Այսպիսի խզումներ ամսվա երկրորդ կեսին ևս տեղի ունեցան՝ այս անգամ արդեն Լիբիայում:


Մյուս կողմից՝ ԱՄՆ-ում նավթի կոմերցիոն պաշարները դեկտեմբերին անընդմեջ նվազել են, ընդ որում՝ ավելի բարձր տեմպերով, քան սպասում էր շուկան: Արդյունքում Բրենթն անցել է 65 դոլարի սահմանգիծը՝ ընդհուպ մոտենալով 70-ին:

Նավթի գնի կտրուկ, իներցիոն աճի տրենդը ձևավորվել է 2017թ-ի հունիսի կեսերից, և տրենդի սկզբնակետից հաշված՝ նավթի գները աճել են գրեթե 50 տոկոսով: Աճն այս ընթացքում 2 հիմնական դրայվերներ է ունեցել: ՕՊԵԿ-ն ու գործընկեր երկրները զգալի հաջողությամբ իրականացնում են առաջարկի կայունացման ռազմավարությունը, և դեռ ավելին՝ պլանավորում են այն ընդլայնել 2018թ-ին: Մյուս կողմից՝ նավթի գնի աճը հնարավորություն է տվել աստիճանաբար շահագործել ԱՄՆ-ում չօգտագործվող

նավթարդյունահանման ենթակառուցյունները(նավթաշտարակների թիվը հուլիսին հասել է մաքսիմալի, այնուհետև փոքր ինչ նվազել ու կայունացել), և շուկայում գինը ճնշող այս ազդակը սկսել է հակառակ ուղղությամբ աշխատել: Կոմերցիոն պաշարները ևս նվազման միտում ունեն, ինչը բավականին արագացավ դեկտեմբերին:

Այսպիսով, նավթի գինն այժմ, կարելի է ասել, գտնվում է այն մակարդակում, որին թիրախավորել էին հասնել ՕՊԵԿ-ը և գործընկեր երկրները: Գնի հետագա աճը կարող է տեղի ունենալ այնպիսի գործոնների հաշվին, ինչպիսիք դրսևորվեցին դեկտեմբերին՝ «սև կարապի» իրադարձություններ՝ այնպիսիք, որոնց չեն սպասում շուկայի մասնակիցները. առաջարկի խզումներ, գեոքաղաքական լարումներ և այլն: *Տեխնիկական վերլուծության տեսանկյունից սակայն, գնի աճի իներցիան բավականին բարձր է, և կարելի է սպասել միտումի շարունակում մինչև որոշակի մակարդակ՝ սպեկուլյատիվ դիրքերի ավելացման շնորհիվ:*

Պարենային շուկայում շաքարավազի գինը շարունակել է վերականգնումը, նոյեմբերին աճելով 1.1 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 24.7 տոկոս անկման դիմաց, իսկ **ցորենի գինը ամսվա արդյունքներով նվազել է 1.5 տոկոսով**: Տարվա ընթացքում վերջինս ևս զգալի փոփոխություններ չի կրել՝ նվազել է ընդամենը 2.1 տոկոսով: Վերջին տարում շաքարավազի գների անկումը պայմանավորված էր Բրազիլիայում բերքի կտրուկ աճով, որ 2017թ-ին համաշխարհային շուկայում ավելցուկ է առաջացրել:




Համաշխարհային արժույթային շուկաներ: Դեկտեմբերին ամերիկյան դոլարի դիրքերը մյուս հիմնական արժույթների նկատմամբ թուլացել են, և դոլարի ինդեքսը նվազել է 1.3 տոկոսով: Տարվա ընթացքում ինդեքսը անկումը կազմել է 10.2 տոկոսով:

Գծապատկեր 9. Դոլարի ինդեքսի՝ դինամիկան



Դեկտեմբերին եվրոն շարունակել է ամրապնդել է դիրքերը դոլարի նկատմամբ՝ աճելով 0.8 տոկոսով: Ռուսական ռուբլին ևս շարունակել նախ թուլացել, ապա ամրապնդվել է դոլարի նկատմամբ՝ ի վերջո նվազելով 0.2 տոկոսով և պահպանվելով նախորդ ամիս գրանցված մակարդակների շուրջ: Տարվա կտրվածքով եվրոն արժևորվել է 14, իսկ ռուսական ռուբլին՝ 6 տոկոսով:

¹ Դոլարի ինդեքսը(DXY) արտարժույթային զամբյուղի նկատմամբ ԱՄՆ դոլարի հարաբերական արժեքի չափն է: Զամբյուղի մեջ ներառված են եվրոն(կշիռը՝ 57.6%), ճապոնական իենը(13.6%), ֆունտ ստեյլինգը(11.9%), կանադական դոլարը(9.1%), շվեդական կրոնը(4.2%) և շվեյցարական ֆրանկը(3.6%):




Եվրո/ԱՄՆ դոլար արժույթային զույգի դինամիկան դեկտեմբերին բավականին բարդ ընկալելի և խճճող է ֆունդամենտալ վերլուծության տեսանկյունից: Այսպես, որո՞նք էին հիմնական դրայվեր-իրադարձությունները: Նախ՝ հարկային փափեթի ընդունումը, ապա՝ տոկոսադրույքների բարձրացումը ԴՊՀ կողմից: Դրանք երկուսն էլ դոլարի համար դրական ազդակներ պետք է լինեին, սակայն փաստ է՝ դոլարը ամսվա ամբողջ երկրորդ կեսին անկում է ապրել: Սրա բացատրությունը մեկն է՝ իրադարձություններն ամբողջությամբ սպասված էին շուկայի կողմից, և ներառված գնանշումներում, իսկ դոլարի թուլացումը պայմանավորված էր այնպիսի գործոններով, ինչպիսին էր ընդամենը 0.1 տոկոսային կետով սպասվածից ցածր 12 ամսա գնաճը(1.7%) ԱՄՆ-ում:

Տարվա ընթացքում եվրոյի դիրքերի զգալի ամրապնդումը արդյունք է ԱՄՆ և ԵՄ շուկաների կոնվերգենցիայի. եվրոգոտում գնաճը և տնտեսական աճն արգանում են, ԵԿԲ-ն ազդակներ է տալիս շուկային տոկոսադրույքների սպասվող աստիճանական բարձրացման մասին, իսկ ԴՊՀ-ի կողմից քաղաքականության կոշտացումը այդքան էլ արագ չի ընթանում:


Ընդհանուր առմամբ դոլարը իր վրա ուժեղ ճնշում է զգում՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում աճի հեռանկարների բարելավմամբ, ԵԿԲ կողմից քաղաքականության սպասվող նորմալացմամբ և ապա՝ կոշտացմամբ, այլ երկրներում տոկոսադրույքների սպասվող բարձրացումներով և ազգային արժույթները վերագնահատումներով: Այս ազդակները և հատկապես՝ եվրոգոյում տոկոսադրույքների աստիճանական բարձրացումը ամենայն հավանականությամբ կշարունակեն ճնշումը դոլարի վրա նաև 2018թ-ին՝ շարունակելով դոլարի իդեքսի նվազման տրենդը:

Ռուսական ռուբլին դեկտեմբերին ուժեղ կոռեկցված է եղել նավթի գնանշումների հետ՝ նրան զուգահեռ ամրապնդելով դիրքերը: Բացառություն է կազմում ամսվա առաջին կեսը, երբ ռուբլին փոքր ինչ հետ մնաց նավթի գնի աճի համեմատ: Պատճառը, ամենայն հավանականությամբ, ՌԴ ֆինանսների նախարարության կողմից շուկայից ռեկորդային ծավալով արտարժույթի գնումներն էին(ռուսական ֆիննախը գնման օրական ծավալները հասցրել է պահի փոխարժեքով մոտ 200 մլն դոլարի):

Ընդհանուր առմամբ, տարվա ընթացքում ռուբլու արժևորումը պայմանավորված էր նախ՝ նավթի գնի աճով, ապա՝ ռուսական և զարգացած շուկաների միջև առկա **իրական** եկամտաբերությունների բարձր դիֆերենցիալով, որը գրավիչ է carry trade գործարքների համար: Սա պայմանավորված էր ՌԴ կենտրոնական բանկի կողմից վարվող կոշտ քաղաքականությամբ՝ հաղթահարելու բարձր ինֆլյացիան: Այս նպատակին ԿԲ-ն ըստ էության հասավ, և նոյեմբերին 12 ամսյա գնաճը կազմեց 2.5 տոկոս: Որպես արձագանք՝ մոնետար կարգավորողը դեկտեմբերի 15-ին տոկոսադրույքը նվազեցրեց 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 7.75 տոկոս: Սա, ըստ էության, սահմանափակում է ռուբլու հետագա աճի պոտենցիալը, որն ամենայն հավանականությամբ կպահպանվի 60 ռուբլի 1 դոլարի դիմաց մակարդակի շուրջ:




Համաշխարհային կապիտալի շուկաներ: Դեկտեմբերին զարգացած երկրների ֆոնդային շուկաներում դրսևորվել են տարբեր միտումներ: Ամերիկյան S&P 500 ինդեքսն աճել է 1.1%, իսկ գերմանական DAX-ը նվազել 0.8 տոկոսով: 2017թ-ի ընթացքում S&P-ն աճել է 19.6, իսկ DAX-ը՝ 12.5%-ով:




S&P 500 ինդեքսը դեկտեմբերին շարունակեց աճել՝ արձագանքելով հիմնականում հարկային նոր փաթեթի ընդունմանը: Տարվա ընթացքում ամերիկյան ֆոնդային շուկան գրեթե յուրաքանչյուր ամիսը փակել է աճով: Ամերիկյան տնտեսությունն, անշուշտ, այնքան արագ չի վերականգնվում, ինչպես դեպի նոր ռեկորդների է սլանում ֆոնդային շուկան՝ չնայած զսպող ուղղություն ունեցող դրամավարկային քաղաքականությանը: Սակայն գլոբալ մակարդակով առկա անորոշությունը, ԱՄՆ խթանող հարկաբյուջեփոփոխության քաղաքականության սպասումները, սպասվածից ավելի դանդաղ կերպով տոկոսադրույքների բարձացումը գրավիչ է դարձնում ամերիկյան

շուկան, իսկ վերջինիս աճը շրթայական ռեակցիոլ ավելացնում է ամերիկյան բաժնետիրոջ նկատմամբ պահանջարկը:

Այնուամենայնիվ՝ ամերիկյան ֆոնդային շուկայի աճը հանգեցնում է դրա՝ իրական տնտեսության նկատմամբ խզման մեծացմանը, և հետևաբար սահմանափակում ապագա աճի հնարավորությունը:



Դեկտեմբեր ամսին զարգացող շուկաների(Emerging markets) ֆոնդային շուկաներն ամփոփող **MSCI ինդեքսը նախ նվազել, ապա աճել է**, ամսվա արդյունքներով իր արժեքն ավելացնելով 3.3 տոկոսով: Ռուսական **MMB5-ն ամսվա սկզբում կտրուկ աճել է, ապա նվազել՝** ամսվա արդյունքներով արձանագրելով 0.4 տոկոս աճ: Տարվա ընթացքում MSCI-ն աճել է 34.4, իսկ MMB5-ն նվազել 5.5 տոկոսով:



Դեկտեմբերին ԱՄՆ պարտքային շուկայում տոկոսադրույքների տատանողականությունը բարձրացել է, սակայն մակարդակի մեծ փոփոխություն չի արձանագրվել: ԱՄՆ 10 տարի ժ.կ. պետական պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է 1 բազիսային կետով կամ 0.4 տոկոսով: 2017թ-ի ընթացքում այս պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է 4.1 բազիսային կետով:

Ամսվա ընթացքում 2 բազիսային կետով նվազել են նույն ժամկետայնությամբ ռուսական պարտատոմսերի եկամտաբերությունները, ընդ որում՝ տարվա ընթացքում նվազումը կազմում է 79 բ.կ.:

